ՀԻՆ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

(Խաչատուր Մուշեղյանի ծննդյան 95-ամյակի առթիվ)

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Դրամագիտությունը պատմագիտության այն ոլորտն է, որը միշտ դժվարահաս է շատերի համար: Այն հետազոտողից պահանջում է ոչ միայն պատմական խորը գիտելիքներ, այլև փոխշաղկապված է գիտական այլ բնագավառների հետ: Միայն հին լեզուներին տիրապետելը, նաև հնագիտական, հնագրական, տնտեսագիտական, պատմաքաղաքական, արվեստաբանական ու ժամանակագրական հարուստ գիտելիքների առկայությունն է հնարավորություն տալիս ընդգրկուն ծավալով ուսումնասիրել հին ու միջնադարյան դրամները: Դրամը բոլոր քաղաքակրթություններում անցել է իր ուրույն ճանապարհը և առանց դրամագիտական վկայությունների դժվար է հնագույն երկրների պատմությունը բացահայտել, քանզի այն աղբյուրագիտական էական նշանակություն ունի այն պարագայում, երբ լռում են գրավոր սկզբնաղբյուրները:

Հայաստանում հայտնաբերված հին ու միջնադարյան մետաղադրամները և դրանց ժամանակագրությունը կարևոր են հայոց երկրի ներքին ու արտաքին կապերի և հարաբերությունների քննության հարցում:

Դրամագիտության հանդեպ հետաքրքրությունը առաջացել է Եվրոպայում, մասնավորապես Իտալիայում, դեռևս XV դարից: Այդ ժամանակաշրջանում դրամները դիտվում էին սոսկ որպես արվեստի նմուշներ, և դրամագիտությունը նախնական շրջանում դրսևորվում էր, որպես հետաքրքրասիրություն դեպի անտիկ աշխարհի հնագույն դրամները: Հետագայում ստեղծվեց գիտելիքների մի ամբողջական համակարգ, որը ձևավորվեց փուլ առ փուլ՝ դրամագիտության զարգացման սաղմնավորումից մինչև օրս: Դրամագիտությունը դարձավ պատմագիտության կարևորագույն ու անքակտելի ճյուղերից մեկը:

Մայր Հայրենիքում՝ երկրի տնտեսական-քաղաքական իրավիճակի ու հայոց պետականության բացակայության պայմաններում դրամագիտությունը զարգացում չէր կարող ունենալ: Հետևաբար, այն առաջացավ հայրենիքից դուրս, և նրա առաջին հետազոտողները եղան Մխիթարյան միաբանները:

Դրամագիտությունը, որպես պատմագիտական մտքի կարևոր ասպարեզներից մեկը, Հայաստանում ճանաչվեց ու զարգացավ միայն պետականության վե-

բականգնման ժամանակաշրջանում: Յոթանասուն տարի առաջ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը՝ ականավոր արևելագետ Հովսեփ Օրբելին, հայրենական գիտության տարբեր ճյուղերի զարգացման խնդիրը բարձրացնելով՝ առաջարկեց հատուկ ուշադրություն դարձնել դրամագիտությանն ու նրա հրատապ զարգացմանը: Այդ ժամանակ դրամագիտությունը որպես գիտական ուսումնասիրության մասնաճյուղ ավելի շատ կրում էր հավաքչական և հաշվարկային բնույթ: Այն ուրույն զարգացում ունեցավ և մեծապես կապված էր Հայաստանում XX դարի 50–60-ական թվականների հնագիտության զարգացման հետ: Դրամագիտական նյութի առատությունը մեր երկրում պատահականություն չէ, այլ օրինաչափ արտահայտություն է այն դերի ու նշանակության, որն ունեցել է Հայաստանը միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում:

1948 թ. խնդիրն ստացավ իր լուծումը: Հայաստանի ԳԱ-ն մեկ տեղ հատկացրեց դրամագետի պատրաստման համար: Ակադեմիայի նախագահությունը որոշեց այդ տեղում տեսնել ասպիրանտական քննությունները մրցութային կարգով փայլուն հանձնած Խաչատուր Մուշեղյանին և նրան գործուղեց Լենինգրադ (Սանկ-Պետերբուրգ)՝ Պետական Էրմիտաժի դրամագիտության բաժին: Այստեղ էլ նա մասնագիտական կրթությունը ստացավ ռուս անվանի դրամագետների ղեկավարությամբ և Հովսեփ Օրբելու խստագույն հսկողության ներքո:

Վերոգրյալ թվականից էլ սկսվեց երիտասարդ Խ. Մուշեղյանի կյանքի էրմիտաժյան շրջանը, որը շարունակվեց մինչև կյանքի վերջը: Նա հայ պատմաբանների այն սերնդից էր, որ Գագիկ Սարգսյանի, Կարեն Յուզբաշյանի, Արամ Տեր-Ղևոնդյանի, Մանվել Զուլալյանի, Գևորգ Տիրացյանի հետ անցել էր լենինգրադյան դասական դպրոցի ավանդույթները:

Պատմական գիտությունների դոկտոր Խ. Մուշեղյանը, որին հանձնարարվեց ղեկավարել Հայաստանում հին ու միջնադարյան դրամների հետազոտությունները, այդ գործի կարապետներից մեկը եղավ հայրենիքում:

1919 թ. սեպտեմբերի 20-ին, ավանդույթներով ու մշակույթով հարուստ Ալեքսանդրապոլում, վիրաբույժ-բժիշկ Արտաշես Մուշեղյանի[1] ընտանիքում ծնվեց Խաչատուրը: Հայրը ցանկանում էր, որ որդին նույնպես վիրաբույժ դառնա: Սակայն պատանու հետաքրքրություններն ու սերը դեպի պոեզիան, թատրոնը, պատմությունն ու փիլիսոփայությունն ավելի զորավոր էին: Սկզբնական

[1] *Ա. Վ. Գրիգորյան, Բ. Գ. Մելքումյան. Հայաստանի բժիշկները մեծ հայրենականում, գիրք երկրորդ, Երևան, 1987, էջ 187:*

կրթությունը ստացել է հայրենի քաղաքում: Այնուհետև սկսվեց երկրորդ աշխարհամարտը, և երիտասարդը զորակոչվեց բանակ: Մի կողմից պատերազմն ընդհատեց նրա ուսումը, մյուս կողմից՝ երիտասարդին ազատեց ձերբակալությունից. հարազատները վկայում էին, որ Խաչատուրը Լենինականում գործող Չարենցյան գաղտնի խմբակի գործուն անդամ էր և բանաստեղծի պոեզիայի սիրահարը:

Մարտական գործողություններին նա մասնակցեց՝ սկսելով որպես զինվոր Հյուսիսային Կովկասից, կռվեց Կուրսկի, Ղրիմի, Սիմֆերոպոլի, Սևաստոպոլի ճակատներում, հասավ մինչև Մերձբալթիկա՝ արդեն որպես կայացած հրամանատար[2]: Պարգևատրվեց անձնվեր ծառայությունների համար և, հրաշքով ողջ մնալով, վերադարձավ հայրենի տուն՝ շարունակելու ընդհատված ուսումը, որը և 1948 թ. ավարտեց փայլուն առաջադիմությամբ: Ինչպես նշեցինք, հետագա կրթությունը շարունակեց Լենինգրադում: Խ. Մուշեղյանի անունը Էրմիտաժի դրամագիտության բաժնի պատմության էջերում հիշարժան է նաև նրանով, որ պատերազմից հետո նա առաջին դրամագետ ասպիրանտը եղավ:

Խ. Մուշեղյանը Էրմիտաժում ստացավ հատուկ ծրագրով կրթություն: Նրա գիտական հետաքրքրություններն ու գիտելիքների մտահորիզոնը բավական ընդգրկուն էր: Պարտադիր նախապայման էր անհրաժեշտ լեզուների տիրապետելը՝ հունարեն, լատիներեն, դասական արաբերեն, որոնք հնարավորություն էին տալիս նյութն ուսումնասիրել ամենայն խորությամբ ու պահանջկոտությամբ:

Էրմիտաժի դրամագիտության բաժնից բացի, երիտասարդը սերտ կապեր էր հաստատել Լենինգրադի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի, հնագիտության ինստիտուտի, Լեզվագիտության կետրոնի հետ, միևնույն ժամանակ Պատմության ֆակուլտետում ձևակերպվեց որպես ազատ ունկնդիր՝ մասնակցելով համալսարանի դասընթացներին: Նրան բախտ վիճակվեց աշակերտել նշանավոր գիտնականների, որպիսիք էին հունալատինական աշխարհի դրամագետ Լ. Բելովա-Կուդինը, արևելագետ Վ. Բելյաևը (վերջինս նրան ուսուցանեց քուֆիական գրելառճի արձանագրությունները): Հաճախեց ռուս արևելագետներ Ի. Յ. Կրաչկովսկու ու Ա. Յ. Յակուբովսկու «Արաբական աղբյուրները և Մերձավոր Արևելքի երկրները» թեմայով դասախոսություններին, ունկնդրեց խոշոր արևելագետ Ի. Դյակոնովի «Իրանի պատմությունը և Սասանյանների արվեստը» թեմայով ուսումնական հատուկ ծրագիրը:

Բուն մասնագիտության ղեկավարը դարձավ ռուս անվանի դրամագետ Ալեքսեյ Բիկովը, որը ղեկավարում էր Էրմիտաժի դրամագիտության արևելյան բաժի-

---

[2] *Կ. Ա. Հարությունյան, Մ. Գ. Սահակյան. Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի, Երևան, 1988, էջ 229, 230, 383:*

նը: Զուգահեռաբար մասնակցելով հին ռուսական դրամների խոշորագույն մասնագետ Ի. Գ. Սպասկու դասերին՝ արժանացավ վերջինիս հատուկ ուշադրությանն ու գնահատանքին: Հունահռոմեական և բյուզանդական դրամագիտական գիտելիքներ ձեռք բերելու գործում անցավ Լ. Ն. Բելովայի մասնագիտական դպրոցը:

Էրմիտաժյան տարիները զորավոր դպրոց եղան Խ. Մուշեղյանի մասնագիտական ուսումնառության համար: Գիտելիքներ ձեռք բերելու համար խստագույն պահանջներ էին դրվում սկսնակ դրամագետի առջև, նա պետք է քններ հին և միջնադարյան դրամները, խորամուխ լիներ դրանց կշռային չափերի մեջ, բացահայտեր դիցական և արքայական պատկերների նշանակությունը, դրանք ծառայեցներ պատմական ու տնտեսական կապերը լուսաբանելուն: Սա պրպտումների, վերլուծական դրսևորման ու տքնաջան աշխատանքի մի մարզ է, որին դրամագետ Խ. Մուշեղյանն անմնացորդ նվիրվեց իր ողջ գիտական ստեղծագործական կյանքում:

Թեկնածուական ատենախոսության թեզը նվիրված էր հայոց միջնադարյան մայրաքաղաք Դվինի պեղումների ու նրա տարածքից գտնված մետաղե դրամների քննությանը: 1958 թ. երիտասարդ դրամագետը Լենինգրադի հնագիտության ինստիտուտում փայլուն պաշտպանեց իր թեզը: Պաշտոնական ընդդիմախոսն էր Հովսեփ Օրբելին: Մեծանուն հայագետը հետևյալ խոսքերով է բնութագրել երիտասարդ ասպիրանտի աշխատանքը. «Հայաստանի ու հարևան երկրների պատմության համար կարևորագույն մի գործ, որն իր որակով ոչ միայն համապատասխանում է, այլև չափից դուրս բարեխղճորեն կատարած մի աշխատանք լինելով, ըստ էության, դուրս է գալիս թեկնածուական ատենախոսության սահմաններից»[3]: Սկսնակ դրամագետի համար նման գնահատականը անվանի արևելագետից խիստ պարտավորեցնող էր: Ահա այսպիսի ուսուցիչների մկրտությամբ սկսվեց Խ. Մուշեղյանի կյանքի գիտաստեղծագործական ուղին՝ պարուրված էրմիտաժյան դպրոցի լավագույն ավանդույթներով:

Երիտասարդ դրամագետին առաջարկեցին մնալ Էրմիտաժում, սակայն որոշեց վերադառնալ հայրենիք:

Հայաստանի պատմության պետական թանգարանը 1940–1964 թթ. գտնվում էր ՀՍՍՀ ԳԱ կազմում որպես ինքնուրույն ակադեմիական գիտական հաստատություն[4]: Հնագիտության բաժնի պահոցներում, բացի հնագիտական հավաքածուից, խնամքով պահում էին նաև դրամագիտական հավաքածուները: Հայտնի է, որ հին և միջնադարյան դրամների մշակումը 1937–1955 թթ. ընթացել է դրանց հաշ-

---

[3] *Թեզի մասին Հ. Օրբելու կարծիքը պահվում է դրամագետի անձնական արխիվում:*

[4] *Ուղեցույց Հայաստանի պատմության պետական թանգարանի, Երևան, 1961, էջ 5:*

վառքի ուղղությամբ. այդ գործում նվիրական է եղել թանգարանի գիտաշխատող, հանգուցյալ Ա. Շահնազարյանի ծառայությունը:

Դրամների պահոցը դեռևս նոսր էր, երբ Ա. Շահնազարյանը ծանոթացավ երիտասարդ Խ. Մուշեղյանի հետ և բարձրաձայնեց՝ «Այս երիտասարդն ունի այնպիսի տվյալներ, որ միայն ինքը կկարողանա տնօրինել, զարգացնել ու գիտական հիմքերի վրա դնել այս բաժինը»[5]: Յավոք, նրանք միասին շատ քիչ աշխատեցին. կյանքից հեռացավ Ա. Շահնազարյանը:

Խ. Մուշեղյանի մուտքը բաժին նոր փուլ էր թանգարանի հայ դրամագիտության պատմության զարգացման գործում. բաժինը նրա ղեկավարությամբ դարձավ գիտական միակ կենտրոնը Հայաստանում: Դրամագետն այնտեղ անցկացրեց իր գիտաստեղծագործական կյանքը (1955–1990 թթ.)՝ դառնալով բաժնի պատասխանատուն, իսկ 1975–1978 թթ. զբաղեցրել է թանգարանի փոխտնօրենի պաշտոնը: Անվիճելիորեն՝ լենինգրադյան դպրոցի լավագույն ավանդույթներով սկսվեց մի նոր շրջան բաժնի և հայ դրամագիտության համար: Դրամագիտության բաժինը թևակոխեց իր զարգացման կարևորագույն փուլերը, որոնք նշանակում էին ոչ միայն հնագիտական նոր նյութերի ձեռքբերում, այլև դրանց գիտական հրատարակումներ: Բաժինն ինքնատիպ գիտահետազոտական ինստիտուտ էր, որտեղ ոչ միայն հավաքագրվում էին տարբեր դարաշրջաններում թողարկված ոսկյա, արծաթյա ու պղնձյա մետաղադրամները, այլև ակադեմիական պահանջկոտությամբ կատարվում էր գիտահետազոտական աշխատանք՝ հայոց պատմությամբ ու, մասնավորապես, հայկական դրամներով զբաղվող ինչպես հայ, այնպես էլ օտարազգի դրամագետների համագործակցությամբ:

Խ. Մուշեղյանի ղեկավարության տարիներին ավելի նշանակալից դարձան բաժնի դրամագիտական նյութերի ձեռքբերումները: Ըստ հավաքագրման ուղիների՝ դրանք կարելի է դասել երեք խմբի.

ա. հնագիտական պեղումներից հայտնաբերված դրամներ ու դրամական գանձեր,

բ. շինարարական ու դաշտային աշխատանքների ընթացքում պատահականորեն գտնված դրամներ ու դրամական գանձեր,

գ. արտասահմանի հայկական գաղթավայրերից մայր հայրենիքին նվիրաբերված հին դրամներ ու դրամական հավաքածուներ:

Մուշեղյանը հիմնովին հետազոտեց և փուլ առ փուլ ներկայացրեց Հայաստանում դրամական շրջանառության սկզբնավորման պատմությունը: Դրամագետի առաջին աշխատությունը (որը նա սկսել էր գրել դեռևս էրմիտաժյան ուսուցման

---

[5] *Այս խոսքերը միշտ ուղեկցում էին Խ. Մուշեղյանին:*

տարիներին) հանդիսացավ «Դվինի դրամական շրջանառությունը դրամագիտության տվյալներով»[6] մենագրությունը:

Ապրանքափոխանակությամբ Հայաստան թափանցած ազգային տարբեր ծագում ունեցող դրամները՝ իրենց վրա եղած դիցաբանական ու արքայական պատկերներով, գրության տարբեր ձևերով, տոմարագիտական տարբեր նշաններով, կշռային տարբեր համակարգերի տվյալներով վկայում են, որ մեր երկրում դրամական տնտեսությունն առավել սերտորեն առնչված էր Միջագետքի, ինչպես նաև փոքրասիական երկրամասերի հետ: Խ. Մուշեղյանը (1953–1960), անձամբ մասնակցելով Դվինի հնագիտական պեղումներին, իր տրամադրության տակ ունենալով միջնադարյան քաղաքի ավերակներում 1937–1955 թթ. պեղումներից հայտնաբերած տարբեր ժամանակաշրջանների ու երկրների դրամները, կարողացավ ուսումնասիրել շուրջ 1126 ոսկյա, արծաթյա ու պղնձյա դրամներ: Եվ սույն մենագրությունը դարձավ առաջին ու չգերազանցված աշխատությունը՝ նվիրված միջնադարյան Դվին քաղաքի դրամներին ու դրամական գանձերին: Հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է Դվինի դրամական տնտեսության, քաղաքի միջազգային կապերի, ներքին հարաբերությունների և դրամական շրջանառության պատմությունը: Նրան հաջողվեց ըստ իշխանական հարստությունների դասակարգել թե՛ տեղում դրվագված, թե՛ դրսից բերված դրամները: Աղբյուրագիտական խոշոր հիմք ներկայացնող դրամագիտական նյութի վրա դրամագետը ստեղծեց ժամանակագրական այն ցուցակները, որոնք վերաբերում էին Հայաստանի և հարևան տարածաշրջանների արաբական խալիֆայության ամիրաների VIII–X դդ. պատմությանը, ժամանակագրման մի իրողություն, որ մինչ այդ ցրված էր տարբեր հրատարակություններում, տարբեր երկրների թանգարաններում: Ավելին. Խ. Մուշեղյանի կատարած աշխատանքը հնարավորություն ընձեռեց, որպեսզի Էրմիտաժի գիտնականները ձեռքի տակ ունենան Հայաստանի և հարևան երկրների վերաբերյալ այդ ժամանակաշրջանի համար այն վկայությունները, որ տալիս էին հյուսիսարևելյան Եվրոպայում գտնված դրամական գանձերը: Էրմիտաժյան կրթությունը նպաստեց ոչ միայն արաբական ամիրության, մասնավորապես Սաջյանների ու Սալլարյանների դրամագիտական նյութերի հետ եղած կապերի քննությանը, այլև սելջուկյան դարաշրջանի, մասնավորապես Բեկթեմուրյանների, Կայֆի և Ամիդի Արթուկյան իշխանների, Մոսուլի զենգյան աթաբեկների՝ հելլենիստական ժամանակներից հայտնի հաջորդ պատկերների ընդօրինակությամբ դրոշմված՝ արաբերեն գրություններով XII դ. պղնձե դրամների լուսաբանմանը: Այս աշխատանքն իր խնդիրների համակողմանի մեկնությամբ և գիտական արժեքով մնաց միակը համաշխարհային առու-

[6] Х. А. М у ш е г я н. Денежное обращение Двина по нумизматическим данным. Ереван, 1962.

մով: Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Ռոջերսը այսպես է գրել այդ առիթով. «Ես Ձեզ պետք է շնորհակալություն հայտնեմ Ձեր գրքի համար: Դրամագիտությունը բանալի եղավ պարզելու պատմական բնույթի շատ հարցեր: Ձեր մտքերը բոլորովին նոր ու ինքնատիպ լույս սփռեցին իմ հետազոտությունների վրա: Դրա համար ես շատ պարտական եմ Ձեզ»[7]:

1964 թ. Վենետիկի Մխիթարյանները «Բազմավեպում» Հ. Քյուրտյանի գրչով տպել էին Խ. Մուշեղյանի Դվինի դրամների վերաբերյալ իրենց գնահատականը՝ նշելով, որ «Խ. Ա. Մուշեղյանի եզրակացությունները՝ զարգացած Դվինի դրամագյուտերով թե հաջող են, և թե ուշիմորեն կատարված. անտարակույս նպաստ մեր չգրված ու համաշխարհային առևտրի պատմության համար»[8]:

Ա. Տեր-Ղևոնդյանը հատուկ ձոնագրությամբ արժևորեց Խ. Մուշեղյանի խնդրո առարկա աշխատությունը. «Խ. Մուշեղյանի դրամագիտական վկայությունները Հայաստանի և ողջ Արևելքի միջնադարյան պատմության համար կարևորագույն նշանակություն ունեն, քանի որ ժամանակագրության համար դրամները հավաստի աղբյուրներ են: Այսպիսի արժեքավոր աշխատությունները մեծ օգուտ ունեն տալու Հայաստանի արաբական և Բագրատունյաց ժամանակաշրջանները քննելու գործում»[9]:

Այնուհետև Խ. Մուշեղյանը նվիրվեց հնագույն ու կարևոր դրամական մի գանձի՝ Սիսիանի Սառնակունք գյուղում գտնված հելլենիստական ու հռոմեական արծաթյա դրամներով լեցուն Ք. ա. I դարի վերջով թվագրված դրամական գանձի քննությանը: Այդ հետազոտության արդյունքները հրատարակվեցին առաջին գրքից տասը տարի անց՝ «Հայաստանի դրամական գանձեր»[10] խորագրով մենագրությունում՝ անգլերեն ու ռուսերեն ամփոփումներով: Հեղինակը ներկայացնում է Հայկական լեռնաշխարհի ամենահնագույն ու հարուստ գանձը: Նա հելլենիստական և հռոմեական 373 դրամներից յուրաքանչյուր դրամը առանձնակի ուշադրությամբ, մեկ առ մեկ քննության է ենթարկել: Նրա կատարած աշխատանքի վիթխարի ծավալը ցույց տալու համար նշենք, որ միայն հռոմեական դրամների քննությամբ ի հայտ են բերվել 113 դիմաքանդակ պատկեր և 89 անձնանուն: Առանձնացված են Արտաշեսյան Հայաստանում տարածված դրամների բնորոշ խմբերը՝ սելևկյան, պարթևական, կապադովկիական, հռոմեական, փյունիկյան, փոքրասիական միավորները: Գործն արված է մասնագիտական բարձր բա-

---

[7] *Գրությունը պահվում է դրամագետի անձնական արխիվում: Տե՛ս նաև՝* Armenian Numismatic Journal, USA, Vol. XIX (1993), p. 80.

[8] *«Բազմավեպ», հ. ՃԻԲ (հուլիս-սեպտեմբեր), 1964, էջ 23:*

[9] *«Գրքերի աշխարհ», 22. 05. 1983:*

[10] *Խ. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Հայաստանի դրամական գանձեր, հ. Ա, Երևան, 1973:*

ռեխղճությամբ՝ հենվելով բրիտանական, ֆրանսիական, ռուսական ու գերմանական թանգարանների քարտարանների փորձի ու սկզբունքների հիման վրա:

Մենագրության մեջ դրամագետը ներկայացնում է գանձի հայտնաբերման հանգամանքները, ապա ընթերցողին առաջնորդում հելլենիստական ու հռոմեական երկրների դրամական միավորների ծագման, դրամակշռային համակարգերի ու պատկերագրության, համառոտ գրությունների ու հունատառ սկզբունքով արված մենագրերի աշխարհը: Այդ տվյալների հիման վրա տալիս է ամբողջական պատկերացում՝ գանձի ստեղծման ու թաղման տարիների՝ Ք. ա. I դարի վերջի Հայաստանի քաղաքական վիճակի մասին: Հեղինակը գծագրել է նաև տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի տնտեսական կապերն արտացոլող արժեքավոր մի քարտեզ, որտեղ որոշակի ցույց է տալիս Ք. ա I դարում հայոց երկրի կապերը քաղաքակիրթ ողջ աշխարհի՝ հեռավոր Իսպանիայի, Իտալիայի, Սիկիլիայի ու Աֆրիկայի, հունական աշխարհի և, վերջապես, Փոքր Ասիայի, Միջագետքի ու Պարսկաստանի վարչատնտեսական խոշոր կենտրոնների հետ:

Մենագրության մեջ տեղ գտած պատկերատախտակները կազմեցին Հայաստանում հայտնաբերված անտիկ դրամներին վերաբերող նաև առաջին գործնական դրամների ցանկը՝ քարտարանը: Հայաստանով զբաղվող աշխարհի բոլոր մասնագետները մեր երկրի դրամական համակարգն ու դրամաշրջանառությունը հասկանալու համար այսպիսի գիտական քարտարանի կարիք ունեն:

Գիրքը մեծ հաջողություն ունեցավ Լայպցիգի (Գերմանիա) 1974 թ. գրքի միջազգային տոնավաճառում, որտեղ գրքասեր հասարակությանը ներկայացվեց Հայաստանի հին դրամական շրջանառության պատմությունը: Ականատեսները վկայում էին, որ գիրքը ձեռքից ձեռք էր անցնում՝ մեծ հետաքրքրություն առաջացնելով: Հուշացավ նաև դրամագետ Զ. Պտուկյանի խոսքը. «Ազգի մը պատմությունը կարելի չէ գրել առանց ուսումնասիրելու անոր դրամագիտական անցյալը և ուրախ եմ ըսելու, որ դուք կրցած եք այդքան հմտորեն կատարել ձեր աշխատանքը: Մեր դրամագիտական գրականության մեջ Խ. Մուշեղյանի գիրքը կգրավե կարևոր տեղ մը: Տեսակ մը դասագիրք է հին դրամագիտության, գրված այսքան մաքուր հայերենով … Շա՛տ ապրեք. կշնորհավորեմ ձեզ, որ այս տեսակ խնամքով պատրաստեցիք գիտական աշխատանք մը. կսպասենք այս որակի աշխատության հաջորդական հատորները»[11]: Կ. Յուզբաշյանն էլ գրեց. «Դրամագետ Խ. Ա. Մուշեղյանի՝ Հայաստանի դրամական գանձերի Ա հատորն այն աղյուսներից մեկն է, որով շարված է արդի հայագիտության կառույցը, բառիս ամենալայն իմաստով»[12]:

---

[11] *«Հանդես Ամսօրյա», 1973, -10–12, էջ 498–504:*

[12] *«Հայրենիքի ձայն», 30. VI. 1974:*

Նշենք նաև, որ մեր օրերում այդ գրքի հիման վրա ստեղծվեց կարևորագույն մի քարտարան, որն իրականացրեց Ռ. Վարդանյանը[13]:

Որոշ ժամանակ անց Խ. Մուշեղյանն իր բազմամյա հետազոտությունների արդյունքը ներկայացնում է «Դրամական շրջանառությունը Հայաստանում»[14] մենագրության մեջ, որտեղ, ուսումնասիրելով Հայաստանի դրամական շրջանառության պատմությունը, ներկայացնում է տարածաշրջանում և մերձավոր երկրներում հայտնաբերված դրամներն ու դրամական գանձերը, տալիս Հայաստանի տնտեսական ու միջազգային կապերի գլխավոր ուղղությունները, մանրամասնորեն ներկայացնում, թե ինչպիսի պատկերագրության դրամներ են տարածված եղել Հայաստանում իրենց դրամակշռային համակարգերով: Օգտվելով անտիկ հեղինակների սկզբնաղբյուրներից մինչև միջնադարյան պատմիչներ՝ Խ. Մուշեղյանը միաժամանակ համեմատական պրպտումներ կատարեց դրամագիտական նյութերի շուրջ: Եվրոպական խոշորագույն թանգարանների դրամագետների հետ համագործակցելու շնորհիվ Խ. Մուշեղյանին հաջողվեց ստանալ այդ թանգարանների սեփականությունը հանդիսացող հին հայկական մետաղե դրամների լուսապատկերները: Դա այն տարիների համար բացառիկ երևույթ էր: Ծոփքի ու Կոմմագենեի հայոց թագավորական դրամների ընդգրկումն աշխատության մեջ վկայում էր այն հոգատարության մասին, որ ունեցել են օտար դրամագետները հին Հայաստանի այդ պատմական նշխարների վերաբերյալ:

Դրամագետը ոչ միայն երեք լեզվով նկարագրեց հին Հայաստանի դրամների պատկերագրությունը, այլև ցույց տվեց, թե Հայաստանում դրամական շրջանառությունն ինչ փոփոխություններով է զարգացել, ինչ դրամակշռային համակարգեր են ընդունված եղել դրամագործության մեջ և ինչ կենտրոններ են գործել: Ներկայացնելով հին Հայաստանի ու Արևելքի դրամական համակարգը՝ հեղինակն այդ աշխատությամբ գիտական հասարակության ուշադրությանն արժանացրեց Ծոփքի հայոց թագավորների թողած պղնձե դրամները, Արտաշեսյան վերջին գահակալների պատկերներով դրամական միավորներից հատուկենտ մնացած նմուշները, ինչպես նաև Սասանյանների օրոք պահլավերեն գրություններով թողարկած դրամները, Արաբական խալիֆայության ժամանակներում հատված մետաղադրամներն ու դրամական գանձերը: Բացահայտեց դրամների թողարկման հաճախականությունը, պատկերագրությունն ու դրամագործության հետ կապված այլ երևույթներ: Աշխատանքը արժեքավոր տեղեկություններ է տալիս Արաբական խալիֆայության ու Բագրատունյաց ժամանակաշրջաններում Հայաստանի քաղաքական, տնտեսական ու սոցիալ-գաղափարական իրա-

---

[13] *Ռ. Վարդանյան. Միլլոգե հռոմեական դրամների, հ. Ա, Երևան, 2011:*

[14] *Խ. Մուշեղյան. Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V դ. – մ. թ. XIV դ.), Երևան, 1983:*

վիճակն ուսումնասիրելու համար: Հայոց պատմության համար հետաքրքիր փաստեր են պարունակում Սասանյանների դրամները: Ավելին՝ համաձայն Խ. Մուշեղյանի հետազոտությունների՝ դրամական շրջանառությունը սկսած III դ. վերջերից ցույց է տալիս Հայաստանի անմիջական կապը Պարսկաստանի տարբեր երկրամասերի հետ: Արևելյան դրամների հոծ զանգվածում հայոց պատմության համար կարևոր նշանակություն ունեցող սասանյան դրամները V–VIII դդ. առաջին կեսին արդեն լայնորեն տարածվել էին հայկական քաղաքներում: Դրամագետը հնագիտական պեղումներից հայտնաբերված ու պատահական գտած օրինակների հիման վրա մեկ առ մեկ ուսումնասիրել և գիտական հանրությանն է ներկայացրել Հայաստանում հայտնաբերված Սասանյան Հազկերտ, Պերոզ, Վաղարշ, Կավադ, Խոսրով Անուշիրվան, Որմիզդ Դ, Խոսրով Փարվեզ և Արտաշիր Գ արքաների պատկերներով ու նրանց անունների պահլավերեն գրություններով արծաթե դրամները, որոնք հատվել են Հայաստանի մայրաքաղաք Դվինում: Հեղինակի հետազոտություններից պարզվել է, որ հայկական շուկաներում սասանյան դրամները լայն տարածում են ստացել V–VII դարերում: Դրանք հատվել են Պարսկաստանում ու նրան ենթակա երկրներում: Միջնադարյան առևտրի շնորհիվ այդ արժենիշները դուրս են եկել տեղական՝ ներքին ապրանքափոխանակության ոլորտից ու թափանցել են տարբեր երկրներ, այդ թվում Հայաստան: Յուրաքանչյուր դրամի կամ դրամական զանձի ի հայտ գալը նոր բացահայտում էր հայոց պատմության համար: Հայաստանում Սասանյան արքա Շապուհի պատկերով արծաթե դրամի գոյությունը հաստատում է Մովսես Խորենացու տեղեկությունը՝ Սասանյան արքա Հազկերտ Ա-ի (399–420 թթ.) զահաժառանգ Շապուհին մեր երկրում թագավոր կարգելու մասին: Դրամի վրա հստակ պահպանվել են Շապուհի պատկերը և նրա անվան պահլավերեն գրությունը: Ըստ Խորենացու՝ Շապուհը Հայաստանում թագավորել է Հազկերտի մահվանը նախորդող չորս տարիների ընթացքում (416–420 թթ.): Դրամը թողարկվել է ոչ թե որպես դրամական միավոր, այլ հիշատակելու նրան արքա կարգելու իրողությունը: Դրամական շրջանառությանը ոչ բնորոշ այս արծաթյա դրամը, ըստ հեղինակի, վկայում է հայ-պարսկական քաղաքական հարաբերությունների մասին: Այն արգասիք էր V դ. առաջին քառորդին հայոց երկրի վրա նրա ունեցած քաղաքական ազդեցության:

X դ. զանձերի շարքում քիչ չեն այնպիսիները, որոնց բովանդակությունը հստակորեն արտացոլում է սասանյան ու բյուզանդական դրամների համատեղ շրջանառությունը Հայաստանում և հարևան երկրներում: Իբրև, անմիջական վկաներ են երեք խոշոր զանձ, որոնցից մեկը հայտնաբերվել է Գյումրիում[15]*, մյու-*

[15] М. И. Камера, К. В. Голенко. Ленинаканский клад сасанидских и византийских монет (1956).–«Византийскийвременник», т. XIX. М., 1961.

սը՝ Արարատում (Դվին)[16] և Թբիլիսիում[17]: Այս գանձերը աղբյուրագիտական կարևոր վկայություններ են Հայաստանի և հարևան երկրների պատմության համար: Հայաստանի առևտրական կապերի երկու հիմնական ուղղությունները, մի կողմից՝ Պարսկաստանի, մյուս կողմից՝ Բյուզանդիայի հետ, վեր են հանում բազում խնդիրներ սկսած Բագրատունյաց թագավորության ժամանակներից, երբ բյուզանդական դրամները տարածում են ունեցել Հայաստանում: Բագրատունյաց թագավորության ժամանակներից սկսած Արևելքի ու Արևմուտքի միջև զարգացող առևտուրը XI–XII դարերում կատարվում էր առավելապես բյուզանդական ոսկե դրամներով:

Հայոց պատմության համար ոչ պակաս հետաքրքիր վկայություններ են արաբական խալիֆայության թողարկած դրամները: Հնդկաստանից մինչև Իսպանիա սփռված, հսկայածավալ խալիֆայության դրամներն աստիճանաբար ներթափանցում են Հայաստան: Սասանյան և վաղ բյուզանդական դրամների սպառմամբ ու արաբատառ դրամների երևան գալով՝ տարածաշրջան են մուտք գործում սասանյան ու բյուզանդական դրամների ընդօրինակությամբ թողարկված արաբական դրամներ, որոնք հայտնի էին արաբա-սասանյան և արաբա-բյուզանդական դրամներ անուններով: Արաբա-սասանյան դրամները, երկար ժամանակ շրջանառության մեջ լինելով Խորասանում, Բուխարայում և հատկապես Թաբարիստանում, հասել ու թափանցել են նաև մեր հայկական շուկաներ՝ չունենալով, սակայն, լայն տարածում դրամային տնտեսության մեջ: Արաբա-բյուզանդական դրամները հիմնականում թողարկվում էին Միջերկրականի սիրիապաղեստինյան վաճառաշատ քաղաքներում և հայկական շուկաներ են թափանցել սիրիական ու բյուզանդական քաղաքներից: Միայն խալիֆ Աբդ-ալ-Մելիքի հատուկ ռեֆորմով՝ հիջրայի 77 թ. (=696/97 թթ.) սահմանվեց բուն արաբական դրամակշռային համակարգը:

Մենագրության հաջորդ էջերում հեղինակն անդրադառնում է նաև Անի քաղաքի դրամներին՝ ներկայացնելով այնտեղ շրջանառվող դրամներն ու դրանք համեմատում Դվինի դրամների հետ:

Խ. Մուշեղյանի հետազոտություններում հետաքրքիր ու արժեքավոր է նաև Արտավազդ Բ (56–34 թթ.) չորեքդրամյանի վերաբերյալ հոդվածը[18]: Այն 1959 թ. պատահաբար գտնվել էր Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղի մերձակա հնամյա փլատակների մեջ: Արտառոց այդ դրամի պատկերագրության տվյալները նորություն էին պատմագիտության համար: Մինչ այդ, Արտաշիսյան դրամները

---

[16] Հ. Ա. Մ ա ն ա ս ե ր յ ա ն. *Նշվ. աշխ.:*

[17] В. В. К р о п о т к и н. Клады византийских монет. Свод археологических источников, вып. Г4-4. М., 1962.

[18] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Արտավազդ II-ի չորեքդրամյանը.– ՊԲՀ, 1964, -2, էջ 317–323:*

հիմնականում ներկայանում էին ընդունված՝ հայտնի պատկերագրությամբ, սակայն վերոհիշյալ դրամը բացառություն էր. թագի կենտրոնական մասում բացակայում էին արծիվները, և դրանց փոխարինել էին բուսական նախշեր: Բացի այդ, հայոց արքան ներկայանում էր աստվածային տիտղոսով: Իր այս դրամով նա ներկայացված է ոչ միայն ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ *(«արքայից արքայի») անցյալից հայտնի իր տիտղոսով, այլև* ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΣΔΟΥ *(*ΘΕΙΟΥ*) աստվածային մեծարումով: Հետազոտությունները պարզել են, որ դրամը ուշագրավ է իր մենագրով* [illegible] *: Դեռևս վաղ հայկական դրամների վրա նշված շատ մենագրեր շարունակում են մնալ չպարզաբանված: Այս դրամի մենագիրը բաղկացած է չորս հավասարաչափ գծիկներից, որոնցից երեքը համարյա զուգահեռ են, իսկ չորրորդն ուղղահայաց անցնելով առաջինների միջով՝* ΡΤΞ *գրերի միացություն, որը, ըստ հեղինակի, Արտաշատի հունատառ* ΑΡΤΑΞΑΤΑ *անվան բաղաձայն հնչյուններին համապատասխան նշանագիր է (*Α *ձայնավորը ենթադրվում է յուրաքանչյուր վանկի մեջ): Հին հայկական դրամն երում հաճախ են նշվել Արտաշատ քաղաքի կամ դրամահատարանի անունները: Հետաքրքրական է, որ Արտավազդ Բ-ի օրոք Հայաստանում թողարկված դրամների վրա տարեթիվը նշվում էր ոչ թե սելևկյան տոմարի հաշվով, այլ հայոց արքայի գահակալության տարիների թվով: Այս բոլոր փոփոխությունները հեղինակի մեկնաբանմամբ պայմանավորված են երկրի քաղաքական պատմության՝ արքայի իշխանության տասնութերորդ տարում Հայաստանում ստեղծված քաղաքական իրավիճակով: Արտավազդ Բ-ի շուրջ քսանամյա գահակալությունը Հայաստանի համար եղել է միջազգային բարդ ժամանակաշրջան, երբ թագավորությունը հռոմեական մշտական սպառնալիքի տակ էր: Այս չորեքդրամը հենց այդ տարիների արդյունք է: Հեղինակի վեր բարձրացրած կարևորագույն հարցերը մինչ օրս դրամագետների համար շարունակում են մնալ արդիական և խնդրահարույց*[19]*:*

Խ. Մուշեղյանն իր մասնագիտական և ծանրակշիռ ներդրումն ունեցավ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի ստեղծման գործում[20]*: Այդ հիմնարար աշխատության մեջ գիտնականը հայոց պատմության դրամական շրջանառությունը ներկայացրեց իր բոլոր փուլերով ու զարգացումներով՝ բազմահատորյակում ընդգրկելով հին շրջանից մինչև ուշ միջնադար, նաև՝ Կիլիկյան պետության հայոց դրամների բաժինը: Դրամագետն իր մասնակցությունն է բերել «Հայկական սովետական հանրագիտարանի» պատրաստման աշխատանքներում ևս*[21]*:*

---

[19] *Ռ. Վարդանյան. Արտավազդ II-ի դրամները, Երևան, 2004:*

[20] *Խ. Մուշեղյանի գրչին են պատկանում «Հայ ժողովրդի պատմության» հատորների դրամագիտական բաժինները. տե՛ս հ. I (Երևան, 1971), հ. II (Երևան, 1984), հ. III (Երևան, 1976):*

[21] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. II, Երևան, 1976, հ. III, Երևան, 1997:*

Արժե նշել, որ 1964 թ. Խ. Մուշեղյանի գրած սցենարով նկարահանվեց, հին և միջնադարյան դրամագիտական տվյալների վրա հիմնված՝ արտաքին աշխարհի հետ կապերի մասին մի փաստագրական ֆիլմ[22]:

Դրամագետն իր գիտահետազոտական գործունեությանը համընթաց մշտապես զբաղվել է նաև հայագիտական հարցերին առնչվող գիտակազմակերպչական գործունեությամբ: Նա, մի կողմից, պայքարում էր հավաքածուները կարևորելու ու պահպանելու, դրանք իրենց արժանի տեղը դասելու համար, ինչպես նաև հայ հասարակության գիտակցությունը սնեռելու համաշխարհային դրամագիտական գանձարան-հավաքածուների ուղղությամբ: Մյուս կողմից՝ զբաղվում էր հավաքածուներն ուսումնասիրելու ու հրապարակելու աշխատանքներով:

Հիշարժան է 1979 թ. Հայաստանի պատմության պետական թանգարանում նրա կազմակերպած ցուցահանդեսը՝ նվիրված Սփյուռքի հայ գաղթավայրերի Հայաստանին նվիրաբերած բազմաթիվ դրամներին: Խորհրդային տարիներին նման ցուցահանդեսի կազմակերպումը արտառոց երևույթ էր: Դրամագետի նախաձեռնությամբ 1980 թ. հունվարի 25-ին կազմակերպվեց դրամագիտական մեծարժեք հավաքածուների ցուցահանդես, որտեղ ներկայացված էին հազարից ավելի հին ու միջնադարյան մետաղադրամների և մեդալների բազմաթիվ նմուշներ, որոնք Հայաստան էին հասել ԱՄՆ-ի, Իտալիայի, Կանադայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Ավստրալիայի և Սփյուռքի այլ վայրերում բնակություն հաստատած մեր հայրենակիցներից: Գիտնականի մասնագիտական բարձր հեղինակությունը, նրա ազնվափայլ և համեստ նկարագիրը ստեղծել էին վստահության մի մթնոլորտ, որի շնորհիվ հարյուրավոր նվիրատվություններ էին արվել թանգարանին: Արժեքավոր հավաքածուների երևան գալը դրամագիտության բաժնում մեծապես բարձրացրեց Հայաստանի Պատմության պետական թանգարանի վարկը համաշխարհային ասպարեզում: Բաժնի դրամների պահոցը հարստացավ հազարավոր արժեքավոր հավաքածուներով, որոնց շնորհիվ այս պահոցը, իր պատմական ու նյութական հարստության առումով, հիրավի, կարող ենք որակել որպես Հայոց ոսկեդարան:

Դրամագետը խիստ կանոր էր համարում դրամագիտության բաժնի բոլոր նվիրատվությունները ցուցադրություններում ներկայացնելը, քանզի դրանով բաժինը երախտագիտության ու հարգանքի տուրք էր մատուցում բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են բերել հայրենիքի մշակութային ժառանգության պահպանմանը և հայ դրամագիտության զարգացմանը: Ցուցահանդեսում ներկայացված ցուցանմուշներից ամենահինը Ք. ա. VII դարում հատված դրամն էր, իսկ նորագույնը վերաբերում էր IX դարին: Անշուշտ, ոչ բոլոր երկրները կարող են ներ-

---

[22] *Ժապավենը պահվում է «Երևան» միավորման գունավոր կինոժապավենների ֆոնդում: Այն առաջին գիտավավերագրական ֆիլմն է հայ արքաների դրամների վերաբերյալ:*

կայացնել հին հունական պոլիսների, Աքեմենյան Պարսկաստանի, Ալեքսանդր Մակեդոնացու, հռոմեական, պարթևական, սասանյան ինքնակալների, Բյուզանդական կայսրության, Արաբական խալիֆայության, սելջուկյան պետությունների, Կիլիկիայի հայկական թագավորության, մոնղոլական խաների և բազմալեզու այլ արձանագրություններով ու պատկերներով թողարկված դրամների բնորոշ տիպերը: Մոտ հարյուր երեսուն նվիրատուի լուսանկարներով հուշատախտակ պատրաստվեց՝ նրանցից յուրաքանչյուրի համառոտ կենսագրականով: Ցուցահանդեսի բացման լուրն արագ տարածվեց աշխարհով սփռված մեր հայրենակիցների մեջ: Հիրավի, մեծ համարձակություն և պրոֆեսիոնալիզմ էր հարկավոր այդ ժամանակներում նման մի ցուցահանդես նախաձեռնելու և իրականացնելու համար:

Խ. Մուշեղյանը ստեղծել ու հրատարակել է բուհական դասախոսությունների ծրագիր, որն այսօր միակ արդիական և հիմնավոր ծրագիրն է հայ դրամագիտության դասընթացի համար: 1966–1990 թթ. դրամագետը դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանի ու Մանկավարժական ինստիտուտի պատմության ու արևելագիտության ֆակուլտետների ուսանողության համար: Նա ԳԱԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ էր և միշտ ներկայանում էր իր անկոտրում գիտական սկզբունքներով: Նա անդամ էր նաև «Հայ դրամագիտության ընկերության» (ԱՄՆ, 1971 թ.) և իր հոդվածներով «Հայ դրամագիտական հանդեսի» գործուն թղթակից: Տարիներ շարունակ հանդեսին էր ուղարկում իր բազմակողմանի, խոր վերլուծություններով ու եզրակացություններով արժեքավոր հոդվածները՝ նվիրված հայ դրամագիտության պատմության խնդրահարույց հարցերին, արժանավայել ներկայացնում հայ դրամագիտության հարցերի լուսաբանումն արտասահմանում:

Խ. Մուշեղյանը 1975 թ. պաշտպանում է դոկտորական թեզ՝ «Դրամական շրջանառությունը Հայաստանում» (մ. թ. ա. V–XIV դդ.)»:

Գիտնականը 1978 թ. դառնում է նաև Ռուսաստանի ԳԱ դրամագիտական հանձնաժողովի անդամ:

1978–1984 թթ. Խ. Մուշեղյանը աշխատել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության, իսկ 1985–1992 թթ. պատմության ինստիտուտներում:

Դրամագետը մշտական նորույթներով ու վերլուծական հետաքրքիր զեկուցումներով մասնակցել է միջազգային, ԽՍՀՄ-ի ու Հայաստանյան գիտաժողովներին՝ նվիրված հին ու միջնադարյան պատմության, հնագիտության, արևելագիտության ու բյուզանդագիտության խնդիրներին՝ յուրահատուկ ձեռագիր թողնելով գիտական ասպարեզում:

Խ. Մուշեղյանի դրամագիտական բազմաթիվ հոդվածների շարքում իր ուրույն տեղն ունի «Արտաշատի հայկական գանձը»[23], որը արժեքորում է հայոց հին մայրաքաղաք Արտաշատի ավերակներում 1971 թ. հնագիտական պեղումներով գտնված արծաթե դրամների գանձը՝ բաղկացած բացառապես Տիգրան Մեծի պատկերով արծաթյա միավորներից: Հեղինակը խորամուխ է եղել ուշ հելլենիստական շրջանի՝ հայոց Տիգրան արքայի դրամների պատկերագրության ու ժամանակագրության հարցերի մեջ: Ուշագրավ է, առաջին անգամն է, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել է նման մի գանձ: Այն ներառում է 27 դրաքմաներ և մեկ չորեքդրամ: Համաձայն դրամագետի՝ դրամներից միայն մեկ օրինակն է կրում «Արքայի Տիգրանի» հունարեն արձանագրությունը: Մնացածներն ունեն «Արքայից արքա Տիգրան» պատվատիտղոսը: Գիտնականը դրամների մենագրերը երեք տեսակի է բաժանում. «Արքա Տիգրանի» պատվատիտղոսով հազվագյուտ դրամը, որն ունի 4,12 գրամ կշիռ, թե՛ իր պատկերագրությամբ և թե՛ պատվատիտղոսով տարբերվում է Անտիոքում ու Դամասկոսում թողարկված դրամներից և, ըստ Խ. Մուշեղյանի, հավանաբար, թողարկվել է Միջագետքի՝ Հայաստանի մերձակա քաղաքներից մեկում ու Արտաշատում հայտնվել Ք. ա. I դարի առաջին կեսի վերջին: Հոդվածի վերջում հեղինակը նշում է, որ նոր գտածոները հնարավորություն կտան հաստատելու վերոնշյալ հետազոտության արդյունքները: Տարիներ անց հայտնաբերված դրամները, վերահաստատեցին դրամագետի վարկածը, որ, բացի Հայաստանից ու Ասորիքից, Տիգրան Մեծի դրամներ են հատվել նաև այլ դրամահատարաններում:

Խ. Մուշեղյանի բազմամյա հետազոտությունների արդյունք էր «Դրամական շրջանառությունը Հայաստանում» (1983) մենագրությունը, որտեղ ուսումնասիրելով Հայաստանի դրամական շրջանառության պատմությունը՝ ներկայացրել է տարածաշրջանում և մերձավոր երկրներում հայտնաբերված դրամներն ու դրամական գանձերը՝ նշելով Հայաստանի տնտեսական և միջազգային կապերի գլխավոր ուղղությունները: Մանրամասնորեն ցույց է տվել, թե ինչ պատկերագրության դրամներ են տարածված եղել Հայաստանում, ինչ փոփոխություններով է զարգացել այստեղ դրամական շրջանառությունը, դրամակշռային ինչ համակարգեր են ընդունված եղել դրամագործության մեջ և ինչ կենտրոններ են գործել: Նկարագրելով հին Հայաստանի ու Արևելքի դրամական համակարգը՝ հեղինակն այդ աշխատությամբ գիտնականների ուշադրությունը սևեռեց Ծոփքի հայոց թագավորների թողարկած պղնձե դրամների և Արտաշեսյան վերջին գահակալների պատկերներով դրամներից մնացած հատուկենտ նմուշների վրա, ինչպես նաև Սասանյանների օրոք հատված պահլավերեն գրություններով դրամների, իսկ

[23] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Արտաշատի հայկական գանձը.– «Հայ դրամագիտական հանդես», հ. IV, 1978, էջ 105–124:*

հետագայում՝ Արաբական խալիֆայության տարիներին թողարկված մետաղադրամների ու դրամական գանձերի վրա: Ուշադրության են արժանի նաև դրամների թողարկման հաճախականությունը, պատկերագրությունն ու դրամագործության հետ կապված այլ երևույթներ: Մենագրությունն արժեքավոր տեղեկություններ է տալիս Հայաստանի՝ արաբական ու Բագրատունյաց ժամանակաշրջանների, երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ:

«Աբբասյան դրամների թողարկումը խալիֆաթի «Արմինիա» նահանգում VIII–X դարերում» հոդվածը[24] *վեր է հանում կարևորագույն մի խնդիր՝ կապված Աբբասյանների և Արևելյան խալիֆայության դրամային տնտեսության հետ: Հեղինակի՝ շրջանառության մեջ մտցրած նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ստուգելու պատմիչների հաճախ իրարամերժ տվյալները: Գրավոր հիշատակարանները, դժբախտաբար, տեղեկություն չեն տալիս, թե Հայաստանում Աբբասյանների օրոք ինչ դրամներ են թողարկվել, այսինքն՝ ժամանակագրական և քաղաքական իմաստի ինչպիսի արձանագրություններով են դրանք ճշտված եղել: Հայտնաբերված արևելյան դրամների զանգվածում ստվար խումբ են կազմում բուն Հայաստանում և Աղվանքում VIII–X դդ. դրամները: Շատ արևելագետներ անդրադարձել են այդ վկայություններին: Դրամագետի պրպտումների հետևանքով հաստատված փաստերի համաձայն՝ Հայաստանում հայտնաբերված աբբասյան դրամների թողարկումը եղել է ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Աղվանքում ու Արևելյան Վրաստանում, որոնք մտնում էին ԱՐՄԻՆԻԱ անունը կրող նահանգի մեջ: Դրամագետ Ե. Պախոմովը, որ ժամանակին դասակարգել էր արաբական տիրապետության օրոք Անդրկովկասում թողարկված բոլոր դրամները՝ դրանց մանրամասն նկարագրություններով հանդերձ, իր մի շարք աշխատություններում անդրադարձել է հույժ կարևոր այս խնդրին և հայտնել այն միտքը, որ Արմենիայում արաբական դրամների թողարկման գլխավոր կենտրոնը եղել է Պարտավը: Խ. Մուշեղյանը, սակայն, եղածով չի բավարարվել. նա ծանոթացել է արտասահմանյան կենտրոններում պահվող՝ միջնադարյան Հայաստանին առնչվող դրամագիտական նյութերին, պարզել, որ Դվին, Անի քաղաքների, նաև Ամբերդ ու Գառնի ամրոցների հնագիտական պեղումներից հայտնաբերված աբբասյան արծաթյա ու պղնձյա դրամները, որ պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժնում, վկայում են VIII–X դարերում Հայաստանում հատված աբբասյան դրամների տարածման, նաև դրանց արձանագրությունների ու ժամանակագրության նոր վկայությունների մասին:*

---

[24] *Խ. Ա. Մուշեղյան. Աբբասյան դրամների թողարկումը խալիֆաթի «Արմինիա» նահանգում VIII–X դարերում.– ՊԲՀ, 1973, -4, էջ 143–156:*

ճշգրիտ, մշակված ու կուռ տրամաբանական հիմքի վրա դրամագետը տվեց Արմինիա նահանգում VIII–X դարերում թողարկված աբբասյան դրամների նոր ցուցակը: Դրամագիտական այս տվյալները ձեռքի տակ ունենալով՝ տաղանդավոր գիտնականը լուսաբանում է հայ-արաբական առնչությունների վերաբերյալ մի շարք խնդիրներ, հետևաբար, նրա դրամագիտական հետազոտություններն աղբյուրագիտական նշանակություն ունեն արևելագիտության զարգացման համար:

Վերոբերյալ ուսումնասիրություններն այնքան արժեքավոր էին, որ Սիրիայում 1997 թ. արաբերեն թարգմանվեց նրա աշխատությունների այն բաժինը[25], որ վերաբերում էր Մերձավոր Արևելքին ու միջնադարյան Հայաստանին, առնչվում հայ-արաբական, հայ-սելջուկյան, հայ-մոնղոլական, հայ-պարսկական հարաբերությունների բացահայտմանը: Ցավոք, հեղինակը չտեսավ այդ տպագրությունը:

Սակայն Խ. Մուշեղյանը տեսավ ու վայելեց այն բերկրանքը, երբ Մխիթարյանները 1979 թ. Վիեննայում կազմեցին «Ազգային մատենադարան» մատենաշարի 224-րդ հատորը[26] և առանձին գրքույկով հրատարակեցին դրամագետի արժեքավոր հետազոտությունների արդյունքները: Հեղինակն ավելի թանկարժեք և գնահատելի վերաբերմունք չէր կարող պատկերացնել, քանզի Մխիթարյանները, լինելով հայ դրամագիտությամբ հետաքրքրվող առաջին հետազոտողները, այդ գրքով իսկ իրենց երախտագիտությունը հայտնեցին անվանի դրամագետին:

Խ. Մուշեղյանն ուսումնասիրել ու դասակարգել է նաև Էջմիածնի Մայր աթոռի թանգարանի դրամագիտական հավաքածուն: Վեհափառ հայրապետ Վազգեն Ա-ի խնդրանքով գիտնականը շուրջ մեկ տարի՝ 1975–1976 թթ., այցելում էր Մայր աթոռ՝ վայելելով Վեհափառի անկեղծ ու նվիրյալ բարեկամությունը, որը շարունակվեց մինչև դրամագետի կյանքի մայրամուտը: Նա ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրում ու դասակարգում էր այն բոլոր դրամները, որոնք տարիների ընթացքում նվիրատուներից ստացել էր Մայր աթոռի հարուստ գանձարանը և, ներկայացնում էր այդ դրամների ցուցադրությունը՝ ըստ դրամագետի կատարած համապատասխան դասակարգման[27]: Խ. Մուշեղյանի անբասիր, նվիրված ծառայությունը հայ եկեղեցուն մինչ օրս էլ հիշում են նրան ճանաչողները:

---

[25] 1995 كشيشيان الكسندر الدكتور ترجمها عن الأرمنية العربية النقود تداولها و خارج الامبراطورية العربية في أرمينية ضرب. *(Արաբական դրամների թողարկումը և դրանց շրջանառությունը Հայաստանում, թարգմանել է Ա. Քեշիշյանը): Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Գ. Ջափարիձեին (եղել է Վրաստանի դեսպանը Եգիպտոսում), որը մեզ տեղեկացրեց այդ գրքի մասին:*

[26] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Դրամական շրջանառությունը Հայաստանում սկզբից մինչև Ժ դարը Յ. Քի, Վիեննա, 1979:*

[27] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Մայր Աթոռի դրամագիտական ժողովածուն.– «Էջմիածին», հուլիս, 1976, էջ 37–44:*

Խ. Մուշեղյանի համար նվիրական գործ էր Անիի դրամների ուսումնասիրությունը: Նրա խառնվածքին բնորոշ էր անդրադառնալը կոնկրետ խնդիրներին, երբեք չէր խառնում երկրորդականը առաջնայինին: Նոր ու խնդրահարույց հարցեր քննելիս նա դրամագիտական երևույթները բացահայտում էր բազմակողմանիորեն՝ լուսաբանելով տվյալ ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկություններն ու իրողությունները: Այդպես էր նա կատարում Դվինին, Արտաշատին և Անիին նվիրված ուսումնասիրությունները:

Անիի պեղումներից հայտնաբերված և այժմ Հայաստանի պատմության թանգարանի դրամագիտության բաժնում խնամքով պահվող մետաղե դրամները դրամագետի համար կարծես Անիի դարպասները բացելու կախարդական բանալի դարձան: Խ. Մուշեղյանը չէր մոռանում իր լուսապայծառ ուսուցչի՝ Հովսեփ Օրբելու պատգամը՝ ավարտին հասցնել Անի քաղաքի դրամագիտական արժեքների գիտական հետազոտությունը: 1984 թ. Փարիզում ֆրանսերեն լեզվով հրատարակվեց Անիի հին և միջնադարյան դրամների մասին նրա հոդվածը[28], որտեղ ներկայացրել ու համադրել է երկու քաղաքների՝ Դվինի ու Անիի դրամների ընդհանուր ցուցակը, մանրամասնորեն մեկնաբանել յուրաքանչյուր դրամի ծագումնաբանական և տիպաբանական արժեքը՝ դրանք վեր հանելով հետազոտման մի նոր, ավելի բարձր աստիճանի:

Դրամագետի վերջին աշխատանքներից է «Սյունիքի դրամատան գանձը»[29] ուսումնասիրությունը, որն իր նյութով կարևոր սկզբնաղբյուր և նորություն էր հայոց պատմության համար: Գանձը, որ կշռում էր մոտ հինգ կիլոգրամ, բաղկացած էր բացառապես բարձր որակի արծաթե շուրջ երկու հազարի հասնող արևելյան դրամներից: Նման պարունակություն ունեցող գանձի վերծանումը և յուրաքանչյուր դրամի ճշգրիտ թվագրումն ու արձանագրումը ի վիճակի է գլուխ բերել միայն ծանրակշիռ դրամագետ-պատմաբանը: Խ. Մուշեղյանն իրեն բնորոշ համառությամբ ու համբերատարությամբ կարողացավ գանձի 1934-ի հասնող նմուշները մեկ առ մեկ մանրակրկիտ ուսումնասիրել, նշել դրամների դասակարգման տվյալները՝ Հայաստանի քաղաքական կյանքն ու միջազգային տնտեսական-քաղաքական կապերն ու փոփոխությունները լուսաբանելու նպատակով: Սյունիքի գանձը բացառիկ է իր պարունակությամբ, քանի որ անցյալ գտածոների մեջ այդպիսիք չեն եղել: Դրամների թվում են ևս ուշ սասանյան դրամներ, որոնք նորություն են հայոց պատմության համար: Դրանցից վաղագույնը թողարկվել է 501–506 թթ., իսկ նորագույնը՝ 813–833 թթ., այսինքն՝ հատվել է աբբաս-

[28] K h. A. M o u c h e g h i a n. Bilan comparé des découvertes numismatiques à Ani et à Dvin. – “Revue des études arméniennes”, 1984, p. 461–469.

[29] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Սյունիքի դրամատան գանձը.– □Հանդես Ամսօրյա□, 1990, - 1–12, էջ 140–184:*

յան խալիֆ ալ-Մամունի գահակալության տարիներին: Դրամագետի կարծիքով՝ VI դարի սկզբի դրամների հետ Սյունիքի դրամական գանձի մեջ առկա են IX դարի սկզբին թողարկված դրամներ: Նշանակում է՝ ավելի քան երեք հարյուր տարվա վաղեմության ուշասանական դրամները մնացել էին շրջանառության մեջ:

Հայոց պատմության և Հայաստանի դրամական շրջանառության պատմության համար այս գանձի հայտնաբերումը և գիտական բնութագիրը կարևոր փաստ է. դրամագետն իր կյանքի վերջին տարիներին հսկայական աշխատանք է կատարել այն ուսումնասիրելու, ողջ նյութի ժամանակագրական և իշխանական ցուցակները կազմելու համար: Թեպետ առողջությունն այն չէր և երկու կաթված էր տարել, այնուամենայնիվ, ուսումնասիրում էր դրամների պատկերների ու գրությունների, ինչպես նաև դրանք լրացնող տիպային նշանների մանրամասները: Մեծ հափշտակությամբ, առանց դադարի շարունակում էր աշխատել՝ ձեռքի տակ ունենալով չափազանց քայքայված և վատ պահպանված, բայց շատ արժեքավոր հնագիտական նյութը: Դրամագետը հասցրեց կարևորել Սյունիքի գանձի բացառիկ նշանակությունը միջնադարյան Հայաստանի ու հարևան երկրների պատմության համար: Պատմաբանը գիտակցում էր աշխատանքի տպագրման հրատապությունը: Հեղինակի ցանկությունն էր առանձին գրքույկով հրատարակել այս շատ արժեքավոր ուսումնասիրությունը: Այն նորույթ էր միջնադարով, մասնավորապես, Բագրատունյաց թագավորության ձևավորման նախօրեին Հայաստանի և արտաքին աշխարհի միջև զարգացող ապրանքափոխանակության հարցերով զբաղվող մասնագետների համար: Դրամագետը Սյունիքի գանձը դասակարգեց հետևյալ ենթախմբերով.

ա. սասանյան ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ VI–VII դարերի արծաթե դրամներ,

բ. արաբական ՏԻՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՌԵՖՈՐՄՅԱՆ, այսպես կոչված, ԱՐԱԲՍԱՍԱՆՅԱՆ տիպի արաբերեն և պահլավերեն գրությունների դրոշմով արծաթե դրամներ, որոնք ևս իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի՝

1. Իրանի ՕՄԱՅԱՆ շրջանի՝ առանց իշխանական անունների VII դարի արծաթե դրամներ,

2. Իրանի ՕՄԱՅԱՆ նահանգապետերի անուններով VII–VIII դդ. արծաթե դրամներ,

գ. Թաբարիստանի ԱԲԲԱՍՅԱՆ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՐԻ VIII դարի արծաթե դրամներ (կես դրաքմանոցներ),

դ. արաբական ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏՌԵՖՈՐՄՅԱՆ VIII դ. առաջին կեսի օմայան արծաթե դրամներ,

ե. արաբական ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԱԲԲԱՍՅԱՆ VIII–IX դդ. արծաթե դրամներ,

զ. արաբական քուֆի գրություններով (մաշված) VIII–IX դդ. արծաթե անորոշ տիպի դրամներ:

Այս դասակարգումը նորություն էր դրամների ծագման, ժամանակագրական և աշխարհագրական տվյալների, քաղաքական պատմության, մասնավորապես իշխողների անունների ու նրանց թողարկած դրամների հատման վայրերին առնչվող հարցերի վերաբերյալ: Դրամագետի կազմած արժեքավոր քարտեզն ու գրաֆիկները հնարավորություն են տալիս ավելի հստակ պատկերացում կազմել դրամատների և դրանցում եղած դրամների մասին: Վստահաբար կարող ենք ասել, որ հայագետի կյանքի վերջին տարիների այս աշխատանքը հայտնի չէ շատ արևելագետների, որոնք, կարծում ենք, ըստ արժանվույն պիտի գնահատեն Սյունիքի դրամատան գանձի կարևորությունը ոչ միայն միջնադարյան Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի երկրների համար:

Խ. Մուշեղյանի բազմաթիվ հոդվածներն ու աշխատությունները, գիտական նստաշրջաններին նրա գործուն մասնակցությունը, ինչպես նաև աշխարհի այլ գիտնականների հետ ունեցած սերտ կապերը վկայում են, որ նա իրավ ժամանակակից հայ դրամագիտության հիմնադիրն է[30]:

Նշանավոր դրամագետը երբեք չմոռացավ լենինգրադյան ուսումնառության տարիները և իր լուսապայծառ ուսուցիչներին, մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց Էրմիտաժյան դպրոցի լավագույն ավանդույթներին: Նրան նաև չէր մոռանում իր հարազատ Էրմիտաժը: Այսպես, 1987 թ. հոկտեմբերին՝ ԽՍՀՄ դրամագիտական II կոնֆերանսի օրերին, Պետական Էրմիտաժի դրամագիտության բաժինը մեծ շուքով նշեց իր հիմնադրման 225-ամյակը: Այն ուղեկցվեց գիտական նստաշրջանով, ինչպես նաև դրամագիտական նորահայտ նյութերի ու դրամագիտության երախտավորների պատկերներով և նրանց վաստակի հիշատակություններով կազմակերպված ցուցահանդեսով, որտեղ ներկայացված էր նաև հայ դրամագետը: Ինչպես նշվեց, Խ. Մուշեղյանը Էրմիտաժի դրամագիտության բաժնի՝ հետպատերազմյան տարիների առաջին ասպիրանտն էր, և պատահական չէ, որ խորհրդային տասնհինգ հանրապետությունների անվանի դրամագետներից միայն նրան էր հատկացվել հատուկ անկյուն, որտեղ ցուցադրված էին հայ դրամագետի վաստակի արդյունքները: Այդ անկյունն ապացույցն էր այն սիրո և գնահատանքի, որ Էրմիտաժն արտահայտում էր իր սիրելի ասպիրանտին՝ հայ ժողովրդի նվիրյալ զավակին, որը միշտ հարազատ մնաց իր հայկական հոգևոր խառնվածքին: Դրամագետը փայփայանքով էր պահում Էրմիտաժից ստացած բացիկը, որտեղ գրված էր. «Էրմիտաժի և Հայաստանի թանգարանի ամուր կապերը հանգչում են երկու սյուների վրա. Էրմիտաժում Պիոտրովսկի, Երևանում՝ Մուշեղյան»[31]: Խ. Մուշեղյանին ճանաչողները միշտ նշում էին նրա ազնվակիրթ,

---

[30] *Ժ. Դ ե պ ե յ ր ո. Հայ դրամագիտության հիմնադիրը.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2002, -1, էջ 220–224:*

[31] *Պահվում է դրամագետի անձնական արխիվում:*

նրբանկատ, ասպետական ու պոետիկ նկարագիրը, նրա մեծ ակնածանքն ու նույնիսկ պաշտամունքի հասնող խոնարհումը դեպի Ուսուցիչը:

Դրամագետ, հայագետ Խ. Մուշեղյանի մահվանից (+1992) հետո հրատարակվեց նրա «Հայոց պատմության դրամագիտականը»[32] գիրք-ալբոմի պատկերազարդ, եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) մենագրությունը: Հետմահու սահմանվեց նրա անվանական մրցանակը՝ երիտասարդ դրամագետների լավագույն աշխատանքների համար (ԱՄՆ): 1997 թ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու Հայաստանի պատմության թանգարանի կազմակերպած համատեղ գիտաժողովն ու ցուցահանդեսը (թանգարանի սրահներում) նվիրված էին նրա կյանքին ու գիտաստեղծագործական աշխատանքներին: Ի վերջո, Եվրոպայում լույս ընծայվեց դրամագետի անավարտ մնացած աշխատանքների մի մասը, որոնք հեղինակը տարիներ շարունակ երազում էր տեսնել հրատարակված:

Հետադարձ հայացք գցելով Խ. Մուշեղյանի թողած ժառանգության վրա՝ կարելի է ասել, որ այն ազնիվ նվիրումի մի գեղեցիկ, անզուգական հանրագումար է հայ դրամագիտության պատմության մեջ: Խ. Մուշեղյանը կարողացավ հնագիտական դրամն ուսումնասիրել ու ներկայացնել լայն ու բազմակողմանի ընդգրկումով: Հենց սրանով է նրա թողած ժառանգությունն արժեքավոր հայ և օտար դրամագետների համար[33]: Համաշխարհային ճանաչում գտած դրամագետը շարունակում է մնալ փնտրված, նրա վաստակի նկատմամբ գիտական չմարող հետաքրքրությունը և նրա գրքերի օտարալեզու թարգմանությունները գալիս են փաստելու մեծ երախտավոր պատմաբան Սուրեն Երեմյանի՝ Խ. Մուշեղյանի մասին ժամանակին ասված խոսքերը. «Հեղինակի՝ երկարամյա, քրտնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծած աշխատանքները հայագիտության ոսկե ֆոնդն են մտնելու»[34]:

---

[32] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Հայոց պատմության դրամագիտականը, Երևան, 1997:*

[33] *Ժ. Դ ե պ ե յ ր ո. նշվ. հոդվ., էջ 220–224:*

[34] *«Գրքերի աշխարհ», 22. 05. 1983:*

АНТИЧНЫЕ МОНЕТЫ И МОНЕТНЫЕ КЛАДЫ–ВАЖНЫЕ ПЕРВОИСТОЧНИКИ ИСТОРИИ АРМЕНИИ

(К 95-летию со дня рождения Хачатура Мушегяна)

ВЛАДИМИР БАРХУДАРЯН, АНАИТ МУШЕГЯН

Резюме

Хачатур Мушегян (20. 09. 1919 – 05. 11. 1992) родился в г. Александрополе (Гюмри), в семье врача-хирурга. Среднее образование получил в родном городе. Вторая мировая война оборвала его учебу, когда он был студентом исторического факультета. В ноябре 1941 г. он был призван в армию в качестве артиллериста. Начал войну с Северного Кавказа, Ростова-на-Дону, Мелитополя, Перекопа, Симферополя, Севастополя, Крыма и Прибалтики и завершил на Курляндском полуострове. В 1946 г. капитан Х. Мушегян, вернувшись на родину, продолжил прерванную учебу. В 1948 г. он поступает в аспирантуру Академии наук Армении по специальности «Нумизматика» и становится первым из Армении аспирантом Государственного Эрмитажа после войны. Х. Мушегян получил профессиональное обучение по нумизматике и классическому арабскому языку в ленинградских отделениях Института археологии и Института востоковедения АН СССР . Его учителями были известный русский нумизмат А. Быков и востоковед И. Орбели. Богатый нумизматический материал Двина, Ани, Гарни, Сюника, Еревана впервые получил научную характеристику именно в работах Х. Мушегяна. По завершении аспирантуры в 1952 году Х. Мушегян получил назначение в Ереван. Он работал в Государственном музее истории Армении, сначала в качестве научного сотрудника, затем возглавил отдел нумизматики (1955–1990 гг.). Х. Мушегян положил начало научному изучению и обработке многочисленных монетных кладов на территории Армении. За годы его деятельности в качестве заведующего нумизматическим отделом музейные собрания обогатились новыми дарственными приобретениями, благодаря чему отдел нумизматики стал уникальным историческим валютным фондом Армении. В 1975 г. Х. Мушегян защитил диссертацию на соискание ученой степени доктора исторических наук. В 1975–1978 гг. он был заместителем директора Гос. музея истории Армении по науке. С 1978 г. Х. Мушегян работал старшим научным сотрудником Института экономики, а в 1985–1992 гг.–старшим, затем ведущим научным сотрудником Института истории АН Армении. При этом он почти до самых последних дней жизни продолжал возглавлять отдел нумизматики Гос. музея истории Армении. Именно Х. Мушегяном впервые (в 1966 г.) была составлена программа общего и специального курса лекций по армянской нумизматике для студентов-историков Ереванского государственного университета. Он был автором сценария первого историко-документального фильма, посвященного царским монетам Армении и денежному обращению страны с античных времен до средневековья. В 1979 г. Х. Мушегяном была организована уникальная нумизматическая выставка монет, подаренных музею представителями армянской диаспоры. Многие статьи ученого переведены и опубликованы в ведущих зарубежных научных журналах. Х. Мушегян с 1971 г. был членом ANJ (США), а с 1978 г. – членом Русского нумизматического общества. Без преувеличения можно утверждать, что исследования в области нумизматики, сделанные в середине XX в. в Армении, неразрывно связаны с научной деятельностью Х. Мушегяна. А по мнению академика С. Еремяна, «его монографии войдут в золотой фонд арменоведения».

ANCIENT COINS AND COIN HOARDS AS IMPORTANT SOURCES OF THE ARMENIAN HISTORY
(To Khachatur Mousheghyan's 95th birth anniversary)

VLADIMIR BARKHUDARYAN, ANAHIT MOUSHEGHYAN

Summary

Doctor of historical sciences Khachatur Mousheghyan (20.09.1919–05.11.1992) is the founder of Armenian numismatics in Armenia. Mousheghyan was born in Alexandropol (Gyumri) to the family of a surgeon. His studies had been interrupted by World War II, and then he continued his professional education at the Hermitage in Saint-Petersburg. Mousheghyan was the first postgraduate student at Hermitage after the war and continued working, eventually becoming an expert in Greek, Islamic and Armenian coins. In 1952 he returned to Armenia and was put in charge of the newly created Numismatic Section at Armenian History State Museum as a curator (1955–1990) while continuing his scientific activities with Hermitage. From 1953 to 1960 Mousheghyan participated in the excavations of the medieval city of Dvin. In 1962 he published his first book "Monetary Circulation in Dvin Based on Numismatic Evidence" (Yerevan, 1962). From 1975 to 1978 he held the position of the Deputy Director at Armenian History State Museum (State Museum of Armenian History). In 1978 – 1984 Kh. Mousheghyan worked at the Institute of Economics of Armenian National Academy of Sciences and from 1985 to 1992 at the Institute of History of Armenian National Academy of Sciences. In 1971 the scholar was a member of Armenian Numismatic Society, and in 1978 he also became a member of Numismatic Committee of the Russian Academy of Sciences. His active participation in scientific sessions, his broad thinking and numerous scientific connections with the world's largest centers of numismatics were an unusual phenomenon in the Soviet years. During the curatorship years at Numismatic Section of Armenian History State Museum (1955 – 1990) the section was replenished by many ancient, medieval and modern valuable numismatic collections and materials. The section became a unique research center, where on the basis of excavated and acquired materials numismatic studies were conducted. An impressive scientific work was published dedicated to Armenian numismatics and to the questions of the history of monetary circulation in Armenia. Due to Mousheghyan's efforts, for the first time, a teaching program in the history of Armenian numismatics was created at the Yerevan State University (1966 – 1990) which he personally taught at state universities, and is continued to be taught up to present day. A numismatic fund was created bearing his name, a small part of his legacy that generated a great interest among foreign numismatists allowed some of his works to be published in Europe. Today it is fair to confirm the words of academician Suren Yeremyan that "His legacy is truly a part of Armenian studies golden fund".